ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հունիսի 14-ից 16-ը Մինսկ (Բելառուսի Հանրապետություն) Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ պարոն Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Էրիկ Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Մինսկ (Բելառուսի Հանրապետություն)

   2017թ. հունիսի 14-ից 16-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական Հանձնաժողով

5. **ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» (Էսպո) Կոնվենցիայի Կողմերի 7-րդ և «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» (ՌԷԳ) Արձանագրության 3-րդ հանդիպումներին:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐՆ ՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**

Նիստը սկսվեց բարձրաստիճան պաշտոնյաների բացման հանդիսավոր արարողությամբ: Կողմերը ընտրեցին «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» (Էսպո) կոնվենցիայի Կողմերի 7-րդ և «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» (ՌԷԳ) արձանագրության 3-րդ Կոնֆերանսի բարձր մակարդակի հատվածի համանախագահներին՝

Բելառուսի Հանրապետության բնական ռեսուրսների և շրջակա միջավայրի պահպանության նախարարի առաջին տեղակալին և Բուլղարիայի Հանրապետության շրջակա միջավայրի և ջրային ռեսուրսների նախարարին:

Բարձրաստիճան հատվածի օրակարգով.

-ներկայացվեց և քննարկվեց զեկույց՝ Էսպո կոնվենցիայի և ՌԷԳ արձանագրության դերը Կայուն զարգացման նպատակներին հասնելու համար: Զեկույցը ընդունվեց ի գիտություն:

- բանակցային խումբը մասնակիցներին ներկայացրեց տեղեկատվություն քաղված դասերի և գոյություն ունեցող խնդիրների վերաբերյալ՝ կապված Կոնվենցիայի, մասնավորապես ՌԷԳ արձանագրության իրականացման հետ, կլիմայի փոփոխության դեմ պայքարի ազգային գործողությունների ծրագրի մշակման համար:

- Բարձրաստիճան հատվածի օրակարգի հաջորդ կետով նախատեսված էր Կողմ երկրների նախարարների հայտարարությունները, Հայաստանն իր հերթին հանդես եկավ հայտարարությամբ (կցվում է):

Հաջորդիվ օրակարգով ընդունվեցին հետևյալ որոշումները.

- աշխատանքային պլանի հաստատման մասին (Հայաստանը առաջարկեց աշխատանքային պլանում կատարել փոփոխություն՝ ՌԷԳ արձանագրության իրականացումը կապված ոլորտի ընտրության հետ),
- բյուջեի, ֆինանսական միջոցների և ֆինանսական աջակցության մասին,
- Կոնվենցիայի և Արձանագրության հետագա կիրառման համար ռազմավարության և գործողությունների պլանի մշակման մասին,
- Կոնվենցիայի իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման և ամփոփման մասին,
- ատոմային էներգետիկայի գործունեության ոլորտում Կոնվենցիայի կիրառման մասին,
- Արձանագրության իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման և ամփոփման մասին,
- Արձանագրության համապատասխանության քննարման մասին:

Ժամանակի սղության պատճառով բարձրաստիճան հատվածի ընթացքում Կոնվենցիայի համապատասխանության որոշման նախագծի (VII-2) քննարկումները չեն ավարտվել: Այն (VII-2 որոշման նախագիծը) վերաբերվում էր նաև Հայաստանին: Ի տարբերություն այլ երկրների, Հայաստանն իր հերթին կատարել է Կոնվենցիայի նախորդ Կողմերի հանդիպման VI-2 որոշումը:

Կողմերի կոնֆերանսը ի վերջո որոշեց մեկ տարի հետո կազմակերպել արտահերթ Կողմերի հանդիպում Ժնևում՝ Կոնվենցիայի համապատասխանության VII-2 որոշումը քննարկելու նպատակով:

Տեղի ունեցան պաշտոնյաների ընտրություններ Կոնվենցիայի աշխատանքային տարբեր մարմիններում: Հայաստանի ներկայացուցիչը կընդգրկվի Բյուրոյի կազմում:

Դանիան հայտարարեց, որ վավերացնում է երկրորդ հավելվածը, ինչով այն ուժի մեջ է մտնում անկախ Հայաստանի կողմից վավերացման: Երկրորդ հավելվածը ուժի մեջ կլինի սույն թվականի սեպտեմբերից, ինչի հետ կապված անհրաժեշտ է համապատասխան պետական մարմինների հետագա գործողությունների վերաբերյալ քննարկումների անցկացում:

Հանդիպման ավարտին ընդունվեց Մինսկի Հռչակագիրը:

ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

Է.Գրիգորյան